ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ողջո՛յն Ձեզ մեր Հայոց ազգի քրիստոնէական ծննդավայր և Հայց. Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Ս. Էջմիածնից,

Ողջո՛յն Ձեզ՝ նորընտիր և արժանընտիր Վեհափառ Նախագահ Հայաստանի Հանրապետութեան՝ Ռոբերտ Քոչարեան,

Ողջո՛յն Ձեզ, մեծարգոյ Նախագահ Ազգային Ժողովի և խորհրդարանական պատգամաւորներ՝ անդամներ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն օրէնսդիր ժողովի, որ այս պահին յատուկ նիստ էք գումարում Հանրապետութեան նորընտիր նախագահի երդման արարողութեան երջանկաբեր առիթով:

Ողջո՛յն Ձեզ՝ Սահմանադրական դատարանի Նախագահ և անդամներ, Կառավարական կազմի անդամ նախարարներ, հոգևոր եղբայրներ, մարզպետներ, դիւանագիտական մարմնի ներկայացուցիչներ, հրաւիրեալ պաշտօնական այլ անձինք և սիրեցեալ ժողովուրդ Հայոց,

Ես զգում եմ, որ Հայոց ազգի բազմադարեան Պատմագրքի այնքան հարուստ էջերին մի նոր էջ ենք աւելացնում, երբ այս նուիրական պահին վկաներն ենք դառնում քրիստոնէական պատմութեան երկրորդ հազարամեակի այս վերջալոյսի հորիզոնի վրայ արշալուսուած և արեգակուած մեր հայրենի աշխարհի և հայկական ազգի Հանրապետութեան երկրորդ նախագահի երդման այս հանդիսաւոր արարողութեանը:

Նախ փառք և գոհութիւն եմ ընծայում Ամենակալին Աստուծոյ, որ շնորհեց մեզ՝ ազգիս հայոց՝ անվտանգ և ապահով բոլորել առաջին եօթնամեակը մեր նոր, ազատ ու անկախ Հանրապետութեան: Յարգանք բոլոր նրանց, ովքեր այս Հանրապետութեան առաջին նախագահ Մեծարգոյ Լևոն Տէր-Պետրոսեանի գլխաւորութեամբ՝ դրական, կառուցողական հիմնադրութային և զարգացողական դեր կատարեցին այս Հանրապետութեան եօթնամեայ վաստակի կայացման գործում:

Ամենառատ և անսպառ ու աննուազ ոյժ և արիութիւն, անսահման իմաստութիւն և աննկուն կորով, ժայռանման համբերութիւն Ձեզ՝ մեր նոր Նախագահիդ, որպէսզի ի կատար ածէք այն բոլոր իղձերն ու ապաւումները, որոնք արտացոլացնում են մեր ժողովրդի կամքը, կարիքը և բարիքը միանգամայն:

Վստահ ենք, որ Դուք Ձեր հայրենասիրութեան առաքինութեամբ քաջ գիտակցում էք այն ծանր, բայց ազնուագոյն պարտաւորութիւնները, որոնք կապուած են Նախագահի Ձեր բարձրագոյն ազգային-պետական պաշտօնին: Մեր հայրենիքն ու ժողովուրդը կենցաղային ու քաղաքակրթական յառաջդիմութեան ճանապարհով առաջնորդելու, մեր ազգային ինքնութեան և արժանապատուութեան առողջ ըմբռնումները,

անժանգ արժէքները և հարապատ ու կենսագործ աւանդոյթները վերակենդանացնելու հրամայականին առաջ էք կանգնած: Եւ՝ կանգնած ենք Ձեզ հետ, Ձեր կողքին, մենք բոլորս ի Հայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի, առանց խտրութեան: Ի խորոց սրտի ցանկանում ենք յայտնել Ձեզ, որ մեր Հայց. Առաքելական Սուրբ և ապգային Եկեղեցին իր աղօթքն ու օրհնութիւնն է բաշխում Ձեզ և իր ամբողջական և անվերապահ կօրակցութիւնն է ընծայում Ձեր առաքելութեան:

Երեք տարիներ առաջ, և ճիշտ այս օրը, 9 Ապրիլին, երբ յետ Կաթողիկոսական ընտրութեան և գահակալութեան ստանձնեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծանրագոյն պարտականութիւնը Ս. Էջմիածնում, այնքան մօտից չէինք ճանաչել մեր ժողովրդին Հայաստանում և Արցախում: Ահա այս երեք տարիների ընթացքում Մեր կեանքը պատասխանատուութեան շաղախով միախառնելով մեր ժողովրդի կեանքին, անձնապէս համոզուեցինք, որ մեր վերանկախացեալ հայրենիքի առաջնահերթային կարիքը՝ մարդո՛ւ կարիքն է. -

— Ճշմարիտ, վաւերական, պարկեշտ մարդու,

— Աստծու պատկերն իր մէջ անաղարտ ու կենդանի պահող մարդու,

— Հայրենիքը և ազգը իր անհատական անձից վեր դասել գիտցող մարդու,

— Ընդհանրական շահը մասնաւոր ու խմբակցական շահերից գերադասել իմացող մարդու,

— Հանրային ժողովրդանուէր և հայրենաշինական պարտաւորութիւնը անձնակեդրոն շահից գերակայ ճանաչող և ըստ այնմ արժեցնող մարդու, ով ուզես լինի նա, հոգևորական, կամ պետական, կամ հասարակական ապաստաւոր և կամ պարզ քաղաքացի:

Մեր հայրենիքը, պետութիւնն ու ժողովուրդը չեն փրկուի սոսկ դրամով ու միայն կէնքով: Երկիր չի փոխուիր միայն կառոյցներ ու դրոյթներ (սիստեմներ) փոխելով: Երկիր կը փոխուի, երբ մարդը ինք ունենայ քաջութիւնը փոխուելու և պատրաստ ու ատակ լինի ինք իրեն վերափոխելու, մշտապէս բարեփոխելու, ինքնաճանաչումի և ինքնակերտումի չափանիշներով և բարձրահայեաց նպատակասլաց տեսլականով: Ի վերջոյ, չպէտք է մոռանալ, որ կառոյցն ու դրոյթը, գործիքն ու գործարանը, դրամն ու կէնքը մարդու ծնունդ են և երբ ճիշտ ուղղուածութիւն ունենան՝ նրանք բարիքի կը վերածուեն, այլապէս՝ չարիքի աղբիւր կը դառնան:

Մեր Հայաստան աշխարհում և ողջ հայ ժողովրդի կեանքում հարկ է ստեղծել ներդաշնակութիւն հոգևոր և նիւթեղէն իրականութիւնների, արժէքների և երևոյթների միջև, միշտ բարձր պահելով հոգևորին գերիշխանութիւնը, առանց որի կեանքը կը դառնայ ապառողական և ապառուողական մի անիմաստ գոյութիւն: Յաւէտ ճշմարիտ է մեր Երկնաւոր Վարդապետի՝ Յիսուս Քրիստոսի խօսքը. «Տուք կկայսերն՝ կայսեր և կԱստուծոյն՝ Աստուծոյ»:

Մեր Սուրբ Եկեղեցու կոչումն է լինել այս ճշմարտութիւնների քարոզիչը իր կեանքով, խօսքով, գիրով և գործով, ինչպէս եղել է նա աւելի քան 1700 տարիներից ի վեր: Ահա թէ ինչո՛ւ, որպէս Կաթողիկոս

Ամենայն Հայոց, հաւաստիացնում ենք Ձեզ, Վեհափառ Նախագահ և մեր Հանրապետութեան բոլոր պատասխանատու այլ անձինք, որ մեր Ս. Եկեղեցու բոլոր կարողութիւններն ու կարելիութիւններն ի սպաս ենք դնելու մեր նոր ազգային վերակերտումի և վերաբիւրեղացումի այս նուիրական և անմիջականօրէն ստիպողական գործին:

Սիա թէ ի՞նչ զգացումներով, խոհերով և տրամադրութիւններով այժմ արտասանելու ենք մեր օրհնութեան աղօթքը՝ հայցելով Բարձրեալն Աստծուց, որ մեր երկիրն ու ժողովուրդը պահի ապահով և անվտանգ «յերկնի և յաներկնոյթ թշնամւոյն» և շնորհի բարգաւաճման նոր շրջան ընդ նախագահութեամբ Ձերդ Սիրելութեան:

«Պահպանիչ և յոյս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, օրհնեա՛, պահեա՛, պահպանեա՛ զնորընտրեալ Նախագահն Հանրապետութեան Հայոց և զհայրենի աշխարհն մեր և զՀանրապետութիւնն սորա, և առաջնորդեա՛ զսա ի շաւիղս խաղաղութեան, արդարութեան, բարօրութեան և բարգաւաճութեան, ի վայելումն համայն ժողովրդեանս մեր հայկազնեան ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քո ի խաղաղութեան: Փրկեա՛, Տէր յերկնի և յաներկնոյթ թշնամւոյն, արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ